

Գևորգյան Գայանե (Հայաստան,
Բրյուսովի անվ. պետական համալսարան)

ԱՐԱՐԿԻՐ ՔԱՂԱՔԻ ԼԵԶՎԱԿԱՆ ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Արաբկիրի խոսվածքը¹ գործածվել է Արաբկիր քաղաքում, որը գտնվում է Եփրատ գետի աջ կողմում՝ Ակն և Խարբերդ քաղաքների միջև: Ըստ Թ. Հակոբյանի՝ Արաբկիրը 1800-1830-ական թվականներին ունեցել է մոտ 15 հազար բնակիչ, որից 12 հազարը՝ հայեր: 1915 թվականից առաջ քաղաքի բնակչության թիվը հասնում էր մոտ 20 հազար մարդու, որից 10 հազարը հայեր էին: Արևմտյան Հայաստանի մյուս բնակավայրերի հայության հետ Արաբկիրի հայերը ևս երկու անգամ 1895-96 և 1915 թթ. ենթարկվել են տեղահանման ու բնաջնջման: Տարագրված արաբկիրցիներից 800 հոգի 1922-ին նորից են վերադառնում և բնակություն հաստատում իրենց քաղաքում, բայց, չդիմանալով բռնություններին, գալիս են Հայաստան: Ներգաղթած արաբկիրցիները հիմնադրում են Նոր Արաբկիր ավանը, որը 1929 թ. ուներ 1000 բնակիչ, իսկ 30 տարի հետո՝ 60000: Նոր Արաբկիրը հետագայում ձուլվել է Երևանին՝ դառնալով նրա թաղամասերից մեկը²:

Արաբկիրի բարբառի լեզվական հատկանիշներին նվիրված միակ ծավալուն աշխատությունը Սարգիս Դավիթ Բեկի «Արաբկիրի գավառաբարբառը» աշխատանքն է ³ : Արաբկիրի բարբառային յուրահատկություններին հակիրճ անդրադարձել է նաև Հ. Աճառյանը ⁴ : Սակայն Արաբկիրի՝ Դավիթ-Բեկի և Հ. Աճառյանի կողմից ներկայացված բարբառային տվյալները անցյալ դարի 10-50-ական թվականների իրողություններ են և նոր տվյալներով լրացման և ճշգրտման կարիք ունեն:

Բարբառագիտության զարգացման արդի փուլում, երբ առանձին բարբառների ուսումնասիրությունների, ինչպես նաև հայերենի բարբառագիտական ատլասի ծրագրով շուրջ 500 հայկական բնակավայրերի

¹ Լեզվաբանական գրականության մեջ ընդունված է *Արաբկիրի բարբառ* անվանումը, սակայն աշխատանքում գործածում ենք *Արաբկիրի խոսվածք* եզրույթը, քանի որ ներկայացնում ենք միայն Արաբկիր քաղաքի լեզուն: Արաբկիրի բարբառը, ինչպես Հ. Աճառյանն է նշում, խոսվել է Փոքր Հայքի հարավային մասում.«...գլխավոր քաղաքներն են՝ Արաբկիր, Տիվրիկ, Կյուրին, Տարենտե, ինչպես նաև Կեսարիայի և Յոզղատի գյուղերից մի քանիսը...: Շրջանիս մեծագույն կենտրոնը լինելով Արաբկիրը՝ բարբառս կոչեցին սրա անունով» ¹ (տե՛ս Հայոց լեզվի պատմություն, մաս 2, Երևան, 1951, էջ 348):

² Թ.Խ. Հակոբյան, *Պատմական Հայաստանի քաղաքները*: Երևան, 1987, էջ 50-53:

³ Մելիք Ս. Դավիթ Բեկ, *Արաբկիրի գավառաբարբառը*, Վիեննա, 1919:

⁴ Հ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 348-349:

բարբառային հատկանիշների գրանցման արդյունքում կուտակվել է հսկայածավալ նյութ, որի՝ բարբառային բազմաթիվ միավորների, այդ թվում նաև Արաբկիր քաղաքի խոսվածքի նորահայտ տվյալները դեռևս գիտական շրջանառության մեջ չեն դրվել, խիստ կարևորվում է փաստական այդ հարուստ նյութի սահմաններում ներկայացնել խոսվածքների բարբառային յուրահատկությունները, հետազոտել դրանց հետ առնչվող տեսական ու գործնական մի շարք խնդիրներ, որոնց վերաբերյալ լեզվաբանական գրականության մեջ արտահայտված են հակասական կարծիքներ:

Սույն աշխատանքում ներկայացվում է Արաբկիրի խոսվածքի լեզվական բնութագիրը համաժամանակյա քննությամբ՝ ըստ Հայերենի բարբառագիտական ատլասի ծրագրով գրանցված «Արաբկիր» աշխատանքի⁵: Արաբկիր քաղաքի խոսվածքը Հայերենի բարբառագիտական ատլասի (այսուհետ՝ ՀԲԱ) ծրագրով գրանցել է բան. գիտ. թեկնածու, բարբառագետ Դարիկո Կոստանոյանը 1980 թվականին: Նրա տեղեկությունների համաձայն՝ 84-ամյա Մաքրուհի Ղազարյանը բնիկ արաբկիրցի է եղել: Հայաստանի Հանրապետություն է եկել ընտանիքով 1928 թվականին: Լավ հիշում է մայրենի խոսվածքը, որը, ըստ բարբառախոս Մաքրուհի Ղազարյանի, տարբերվում է շրջանի գյուղերի (Ադն, Անջրդի, Ծագ, Անթրկա, Շեպիք, Հոնար ևն) խոսվածքներից⁶:

Հինհայերենյան ձայնավորները՝ *ա, ի, է, օ, ու, ը*, գործառում են Արաբկիր քաղաքի խոսվածքում՝ չկրելով որակական փոփոխություններ: Ա ձայնավորը հանդիպում է հինհայերենյան *բ, գ, դ, ձ, ջ* ձայնեղ հնչյուններին կամ դրանցից առաջացած խուլերին հաջորդող (*բարձ-բ'արց, բարակ-բ'արակ, բան-բ'ան, դաս-դ'աս, ձագ-ձ'աք ևն*), շչականներին նախորդող և հաջորդող (*ճանձ-ճանջ, խաչ-խաջ, խարշել-խաշել, արժել-արժել, կարճ-կարջ ևն*), ինչպես նաև *մ, ն* ռնգայիններին նախորդող (*ամիս-ամիս, ամպ-ամբ, թան-թան, համար-համար, մանել-մանել, քամել-քամել, նշան-նիշան ևն*) դիրքերում: Հինհայերենյան *ու և ի* ձայնավորները ևս Արաբկիրի խոսվածքում փոփոխությունների չեն ենթարկվել ինչպես ձայնեղներից կամ դրանցից առաջացած խուլերից հետո (*բուք-բ'ուք, տուն-տուն, դուռ-դ'ուռ, ձուկն-ձ'ուգ, ջուր-ջ'ուր ևն*), այնպես էլ շեշտակիր դիրքում (*թունդ-թունդ, սունկ-սունգ, փուշ-փուշ, սուտ-սուտ, ուտել-ուտել, սիրտ-սիրդ, վիզ-վիզ ևն*):

Ո և ե տառերը խոսվածքում չեն գործառում: Այսպես՝ միավանկ բառերի *վո* հնչյունակապակցությունը և երկվանկ բառերի *օ* սկզբնաձայնավորը

⁵ Տե՛ս Հայերենի բարբառագիտական ատլասի նյութեր, Արաբկիր, հ. 132 (այսուհետ՝ ՀԲԱՆ, 132):

համապատասխանում են հին հայերենի *n* ձայնավոր հնչյունին (*որբ-վորփ, ոչխար-օշխար, ոջիլ-օջիլ, ոռնալ-օռնալ, ոսկի-օսկի* են): *O* հնչյունը գործառում է նաև հինհայերենյան ձայնեղներին (*բ, գ, դ, ձ, ջ*) կամ դրանցից առաջացած խուլերին հաջորդող *n*-ի փոխարեն (*բողկ-բ'ողգ, գործ-գ'որձ, դող-դ'ող, ձոր-ձ'որ* են), ինչպես նաև բառամիջի շեշտակիր և նախաշեշտ դիրքերում գտնվող *n*-ի դիմաց (*լողալ-լօգնալ, մոմ-մօմ, խոշոր-խօշօր, խմոր-խըմօր* են): Միավանկ և երկվանկ բառերի բառամիջի շեշտակիր *ե*-ի դիմաց գործածվում է *է* ձայնավորը, այսպես՝ *խելք-խէլք, ցեց-ցէց, վեց-վէց, ասեղն-ասէղ, լեղի-լէղի, փեսայ-փէսա են*: *Ը*-ին նախորդող դիրքում սկզբնաձայնավոր *ե*-ի դիմաց առկա են *է, ի* ձայնավորները, *յէ* հնչյունակապակցությունը՝ *երես-էրէս, երեք-իրէք, երնալ-էրէվնալ, երկու-էրգու, երկայն-հ'էրգան, երկիր-յէրգիր* են:

Արաբկիրի խոսվածքում հինհայերենյան երկբարբառներին համապատասխանում են ձայնավորներ: Այսպես՝ հինհայերենյան շեշտակիր *այ* երկբարբառի դիմաց առկա է *ա* ձայնավորը (*այս-աս, լայն-լան, ձայն-ձ'ան, մայր-մար* են): Նախաշեշտ դիրքում *այ* երկբարբառին համապատասխանում են *է* (*այրիկ-էրիգ, այրել-էրէլ են*) և *ա* (*փայծաղն-փաձախ, այսօր-ասօր են*) ձայնավորները: Հին հայերենի *աւ* երկբարբառի փոխարեն բոլոր դիրքերում գործածվում է *օ* (*աւր-օր, աւձ-օց, աւծել-օձէլ, աւրհնել-օրշնէլ, տաւն-տօն, էաւթն-յօթ են*), *իւ* երկբարբառի փոխարեն՝ *ի* (*ալիւր-ալիր, աղբիւր-ախպիր, արիւն-արին, հիւսել-հիսէլ են*), *ու* (*նեղութիւն-նէղութին, եղբայրութիւն-ախպարութին են*) հնչյունները, իսկ *ոյ* երկբարբառի դիմաց առկա են *ու* և *օ* ձայնավորները, այսպես՝ *բոյն-բ'օն, թոյլ-թօլ, բոյթ-բ'ութ, ոյժ-ուժ* են:

Արաբկիրի խոսվածքում արտաբերական հստակությամբ են հատկանշվում բաղաձայն հնչյունները: Ձայնեղ պայթականների և կիսաշփականների (*բ, գ, դ, ձ, ջ*) դիմաց առկա են շնչեղ ձայնեղներ, այսպես՝ *բարձ-բ'արց, բրինձ-բ'ըրինձ, դրում-դ'ըթում, ձմերուկ-ձ'ըմէրուգ, ջուր-ջ'ուր են*, խուլերի դիմաց՝ խուլեր (*կաքաւ-կաքավ, կարաս-կարաս, պաղատանք-պաղադանք, պակաս-պագաս, տանել-տանէլ, ծաղիկ-ծաղիգ են*): Բառամիջի և բառավերջի դիրքերում խուլերը փոխվում են ձայնեղների (*ապուր-աբուր, ծակել-ծագէլ, կատու-կադու, անիծել-անիձէլ, գետին-գ'էդին, կոպ-կօր, ճանկ-ճանգ, ճակատ-ճագադ են*), իսկ ձայնեղները՝ շնչեղ խուլերի (*առողջ-առօխչ, դադձն-դախց, չղջիկ-չըխչիգ, աղբիւր-ախպիր են*):

Հայերենի բարբառագիտական ատլասի ծրագրով տրված հասկացական-բառանվանողական զուգաբանություններին Արաբկիրի խոսվածքում համապատասխանում են հնչյունական տարբերակներ և բառային տարբեր դրսևորումներ ունեցող ձևեր: Ստորև ներկայացնում ենք հասկացական-բառանվանողական այն զուգաբանությունները, որոնց

իմաստը Արաբկիրի խոսվածքում դրսևորվում է բառային այլ արտահայտությամբ: Դրանք են՝ անտառ-օրման, քամի-հավա, ցող-շրռավա, կաթիլ-պուղ, սառույց-բուզ, ստվեր-շուք, կողմ-թարաֆ, գիծ-խագ, ծայր-ճօթ, անկյուն-քեշա, առաստաղ-հ'ատիք, երդիկ-պաջա, ջրհորդան-օլուխ, ածուխ-քեմիր, եկեղեցի-ժամ, ցեխ-չամուռ, աթար-թըրիք, արմատ-քօք, տերև-փուր, կեղև-ղաբուղ, կորիզ-կուտ, սերմ-կուտ, եզիպտացորեն-հ'էդսէրմացօրէն, լոբի-սըլիկ, կաղին-ֆընդըխ, ցոգուլ-չաղալա, սածիլ-սաղըր, ճակնդեղ-տակ, գազար-ստաղբին, դանդուռ-փերփեր, եղինջ-կըջանուզ, ուրց-ծահին, հէսան-սըրաքար, մեխ-գ'ամ, կճուճ-բ'օղօղ, խցան-թափա, իլիկ-քըռման, անկողին-յաթախ, ակնոց-գ'էզլիզ, օձիք-յախա, քղանցք-քընար, տրեխ-չարուխ, ճոճ-կախօրան, բարուր-դունդախ, օժիտ-ջ'էհէզ, նոր տարի-կաղանթ, ծննդկան-տօղացկան, երեխա-չաղա, տատ-վէնձ մար, տերտերակին-իրիսկին, քահանա-տէրդէր, անորորդի-անէրձ'աք, ամուսին-էրիկզ/էրիզմարթ. տազերկին-նէր, մորեղբայր-տայի, ծերունի-էխտիար, հարևան-դ'ըրացի, ջրաբաշխ-ջ'ըրբանդ, որսորդ-ավջի, հովիվ-չօբան, կրիա-թօսպախա, մողես-գօրձուձ, սարդ-իլիմջագ, որդ-պօզիզ, անձրևորդ-յէրգըրմար, ցեց-գիվա, թռչուն-դուշ, հնդկահավ-դագ, հոպուպ-իբիբօպ, աքաղաղ-խօրօզ, փետուր-թէբուր, ձու-հավկիթ, խայթոց-իժ, ատամն-առղա, բռունցք-գ'ըմփուզ, ազդր-բալդըր, կոկորդ-բօղագ, եղջուր-դօշ, թևատակ-դօլթուխ, շրթունք-պըռզունք, արտևանունք-թայթինչ, վերք-յարա, խաշ-փաշա, կաթնապուր-սիզլի, դոշաբ-ըրուբ, ձավար-կանդըմա/բ'ըլդուր, տիկնիկ-խըմաջիզ, ճան-վէզ, համբույր-պաք, ապտակ-շըլըխար, երկյուղ-վախ, ժամանակ-ադէն, կեսօր-օրսագ, լավ-ադէզ, նիհար-գաիֆ, դառն-լէդի, բութ-քօր, սպիտակ-ճէրմագ, շեկ-սառու, փոքրիկ-պըզդիզ, թանկ-սուղ, կաղ-թօփալ, կորամեջք-կըզուզ, համր-լալ, պեպնոտ-մանօղ, ծաղկատար-կըռղաձ, գանգուր-բըլդիզ, փափուկ-կագուղ, ժլատ-կըծծի, մերկ-չըլբախ, սառն-պաղ, կիսրար-օրթաղ, թխել-էփէլ, քանդել-քագէլ, մեխել-գ'ամէլ, հավաքել-ժօղվէլ, հանգցնել-մարէլ, պարզաջրել-սայէլ, փակել-գ'օցէլ, ավարտվել-լըմըննալ, սառչել-պաղիլ, հանդիպել-ռաստ գ'ալ, հայտնել-խաբար տալ, փափկել-կագօղնալ, սպիտակել-ճէրմըզիլ, թիկնել-կըռթընէլ, կոճակել-օղզէլ, ամուսնանալ-կարքըվիլ, նվազել-չալէլ, համբուրել-պաքնէլ, զբոսնել-օլըրդէլ, փաթաթել-բ'ըլլէլ, բարկանալ-հէրսօղիլ, հորինել-մօզօնէլ, այժմ-հիլմա, ճիշտ-իրավ, իզուր-պարապ, կարծես-գ'իդնաս քի, ինչպես-ինդօր, ներքն-վար, փոխարէն-տէդ, բացի-գաղ, ափսոս-մէխք:

Արաբկիր քաղաքի խոսվածքում գործառող –էր (էր) և -ներ (ներ) հոգնակերտների գուգորդելիությունը թվանիշ հիմքերին պայմանավորված է դրանց ձևաիմաստային առանձնահատկություններով: –էր(էր) վերջավորությունը բաղադրվում է միավանկ բառերին (ջ'ուր-ջ'ըրէր, միս-

միսէր, բ'արց-բ'արցէր, ամբ-ամբէր են), կենդանիների՝ միավանկ հիմքով անուններին (գ'ալ-գ'ալէր, ձ'ի-ձ'իյէր, էշ-էշէր են): -Նէր (նէր) հոգնակերտ վերջավորությունը բաղադրվում է բազմական բառերին (հ'ընգէր «ընկեր»-հ'ընգէրներ, իլիգ «իլիկ»-իլիգներ, խընձօր «խնձոր»-խընձօրներ, ծաղիգ «ծաղիկ»-ծաղիգներ են): Գրաբարյան -ն վերջնահնչյունով միավանկ բառերի մի մասում հոգնակերտից առաջ ն վերջնահնչյունը պահպանվում է (դ'ուռ-դ'ըռներ, թօռ-թօռներ, մաղ-մաղներ են), մյուս մասում՝ ընկնում (ձունգ-ձունգէր, կառ «գառն»-կառէր, ագ-ագէր, նուռ-նուռէր են): Արաբկիրի խոսվածքը հատկանշվում է հոլովանիշ վերջավորությունների և հերթագայությունների առկայությամբ, ինչպես նաև եզակի թվի հարացույցում ի հոլովանիշ թեքույթի, իսկ հոգնակիում՝ ու հոլովանիշի ընդհանրական արժեքով: Ի հոլովանիշ վերջավորությունը գործածվում է գրաբարյան ն վերջնահնչյունով (դ'ուռ «դուռն»-դ'ուռի(ն), ծունգ «ծունկն»-ծունգի(ն), ձ'ուգ «ձուկն»-ձ'ուգի(ն), մաղ-մաղի(ն), օտք «ոտք»-օտքի(ն) են) և ք հոգնակերտով բառերի (միտկ-մըտկի(ն), հարսնիք-հարսնիքի(ն) են), ինչպես նաև կենդանիների և թռչունների անունների (կաքավ-կաքավի(ն), կաղու-կաղվի(ն), հավ-հավի(ն), աղվես-աղվեսի(ն) են) եզակի թվի հարացույցերում՝ կազմելով նրանց սեռական-տրական հոլովաձևերը: Անձնանունները (Տիքրան-Տիքրանի(ն), Անուշ-Անուշի(ն), Նըշան-Նըշանի(ն) են) և տեղանունները (Արաբգէր-Արաբգէրի, Երզնդա-Երզնդայի, Տիվրիգ-Տիվրիգի են) նույնպես այս հոլովման են ենթարկվում: Ի հոլովանիշ թեքույթը գուգորդվում է նաև փոխանվանաբար գործածվող բառերի հոլովանիշ հիմքերին (վենձը «մեծը»-վենձին, սէվը-սէվին, էփօղը-էփօղին, նըստաձը «նստաձը»-նըստաձին են): Հոլովանիշ հիմքի և -ոջ թեքույթի համադրությամբ են բաղադրվում ազգակցական հարաբերություն ցույց տվող բառերի սեռական հոլովաձևերը (քուր «քույր»-քըրօջ, տէր-տէրօջ, կէսուր «սկէսուր»-կէսրօջ, տալ «տալ»-տալօջ, հ'ընգէր-հ'ընգէրօջ են): Ժամանականիշ բառերի սեռական հոլովաձևերը կազմվում են -վան հոլովական վերջավորությամբ (հ'իրիգուն «երեկո»-հ'իրիգըվան, ամիս-ամսվա, շափաթ-շափաթվա են): Գիշեր «քիշեր» և ժամ «սահաթ» բառերը ի հոլովանիշ վերջավորությամբ են կազմում սեռական-տրական հոլովաձևերը (քիշեր-քիշերի, սահաթ-սահաթի), իսկ օր և ցերեկ «ցօրէգ» բառերը՝ ի և վա հոլովանիշ թեքույթներով (օր-օրվա//օրի, ցօրէգ-ցօրէգվա/ցօրէգի): -Ություն վերջածանցով գոյականների սեռական հոլովաձևը ու>ա հերթագայությամբ է կազմվում (քաջութուն «քաջություն»-քաջութան, հաստութուն «չարություն»-հաստութան, ախքադութուն «աղքատություն»- ախքադութան են): Բացառական հոլովը ձևավորվում է -էն հոլովանիշ թեքույթի և հոլովանիշ հիմքի գուգորդելիությամբ, այսպես՝ աղվեսէն «աղվեսից»-աղվեսներէն, հացէն «հացից»-հացերէն, գէղէն

«գետից»-գեղերէն են: Գործիական հոլովի իմաստը արտահայտվում է -օք հոլովանիշ վերջավորությամբ բաղադրված կազմություններով (*բ'երանօք-բ'երաններօք, քարօք-քարերօք, լեզվօք-լեզրներօք* են): Ներգոյական հոլովի իմաստը դրսևորվում է ուղղականաձև հայցականով (*էքին, հ'աշխարքը, հողը են*) կամ մէջ հետադրության և տրական հոլովաձևի բաղադրությամբ (*էքիին մէջը, հ'աշխարքին մէջը, հողին մէջը* են): Հոգնակի թվաձևերի սեռական հոլովաձևերը կազմվում են ու հոլովանիշ թեքությով (*գօվէր «կովէր»-գօվէրուն, շունէր «շներ»-շունէրուն/ն/, ճուրէր «ջրէր»-ճուրէրուն/ն/, դունէր «տներ»-դունէրուն, քաղաքներ-քաղաքներուն* են):

Ածականի գերադրական աստիճանը կազմվում է *բիթունէն* բառաձևով, այսպէս՝ *բիթունէն մէնձ «մեծ», բիթունէն պըզդիզ, բիթունէն աղէզը «լավ»* են: Թվականի բաշխականության իմաստը դրսևորվում է քանական թվականի կրկնությամբ՝ *մէյմէզ, իրէք-իրէք, չօրս-չօրս, տաս-տաս* են: Խոսվածքում *յոթանասուն, ութսուն, իննսուն* թվականների փոխարեն գործածվում են *յէթմիշ, սաքսան, տօխսան* փոխառյալ ձևերը:

Ես, դու, մենք, դուք անձնական դերանունների տրական հոլովաձևերը կազմվում են գրաբարյան հոլովաձևերի (ինձ, մեզ, քեզ, ձեզ) հնչյունական տարբերակների և ի հոլովանիշ թեքությի գուգորդությամբ (*հ'ընձի, քըզի, մըզի, ձ'ըզի*): Հայցական հոլովը տրականաձև է (*զըսիրէ հ'ընձի, քըզի, մըզի, ձ'ըզի*): Անձնական դերանունների բացառական հոլովաձևը կազմվում է տրականի հիմքի և -մէն հոլովանիշ թեքությի համադրմամբ (*հ'ըզմէն, քըզմէն, մըզմէն, ձ'ըզմէն, անօրմէն, հ'իրենցմէն*): Ըստ Դ. Կոստանյանի՝ գործիականի իմաստը արտահայտվում է կա'մ բացառականով, կա'մ տրական-հայցականով (*Հ'ինքն հ'իրենմէն/հ'իրեն վըրա շաղ կուռէնա նը* «Ինքն իրենով շատ կիպարտանա»)⁶, իսկ գործիականը՝ տրականի հիմքի և -մօլ վերջավորության գուգադրությամբ (*ինզմօլ, քէզմօլ, մէզմօլ, ձէզմօլ, իրենմօլ, իրենցմօլ*): Եզակի 3-րդ դեմքը (նա) արտահայտվում է *ան* (Անի գ'ընաց «Նա գնաց»), իսկ հոգնակի 3-րդ դեմքը՝ *անօնք* (Անօնք գ'ացին «Նրանք գնացին») ձևերով: Խոսվածքում պահպանված է ցուցական դերանունների եռանդամությունը. *այս, այդ, այն* ցուցական դերանուններին համապատասխանում են *աս, ատ, ան* տարբերակային ձևերը (*աս դ'ունը «այս տունը», ատ ձ'ատը «այդ ծառը»* են): *Սա, դա, նա* ցուցական դերանունների իմաստը դրսևորվում է համանիշ ձևերով, այսպէս՝ *աս//իսա, ադ//իդա, ան//ինա*: *Աս, ադ, ան* դերանունների սեռական-տրական հոլովաձևերը կազմվում են *այսր, այդր, այնր* տիպի հիմքով (*ասօր, ադօր, անօր*): Սրանց եզակի և հոգնակի թվերի բացառական հոլովաձևերը

⁶ Տե՛ս ՀԲԱՆ, Արաբկիր, հ. 132:

բաղադրվում են սեռական-տրականի հիմքից (*ասօրէն, աղօրէն, անօրէն, ասօնցմէն, աղօնցմէն, անօնցմէն*): Գործիական հոլովածներ գործածական չէ: Ով դերանվան եզակի սեռական-տրականը կազմվում է *հ'ում ձևով* (*Բսա հ'ում դ'ունն է*: «Սա ու՞մ տունն է»): Հայցական հոլովը տրականաձև է (հ'ում), այսպես՝ *Ան հ'ում դ'եսավ* «Նա ու՞մ տեսավ»: Ով դերանվանը համապատասխանող *յէվ* կազմությունը արտահայտում է ինչպես եզակի, այնպես էլ հոգնակի ուղղականի իմաստ (*Էգօդները յէ՞վ էին* «Ո՞վ եկավ/Ովքե՞ր եկան»):

Խոսվածքում գրաբարյան 4 լծորդություններից (ա, ի, ե, ու) պահպանվել են 2-ը՝ *ա, է* (*կիտնալ, վրլալ, դէսնալ, առնէլ, խըմէլ, դընէլ* են): Դերբայական համակարգը թերի է.բացակայում են անկատար և ապառնի դերբայները: Վաղակատար դերբային բնորոշ է *-էր* (*մընացէր իմ, զարմացէր իմ* են), հարակատարին՝ *-աձ* (*էփաձ, նըշանվաձ, զարմացաձ* են) վերջամասնիկները: *Ա* խոնարհման բայերի ենթակայական դերբայը բաղադրվում է անցյալի հիմքով (*գ'օղցօղ, զարմացօղ, հասկըցօղ, վախցօղ* են): *Գալ, տալ, լալ* բայերի ենթակայական դերբայը արտահայտվում է *էգօղ, լացօղ, դըվօղ* ձևերով: Ժխտական դերբայը իմաստը արտահայտվում է անորոշի հիմքի և *-էր, -ար* վերջամասնիկների գուգորդությամբ՝ (*չիմ*) *ըսէր, (չիմ) մընար, (չիմ) խօսիւր* են: Խոսվածքը բնորոշվում է նաև ընթացակցական դերբայի գործածությամբ, որը կազմվում է անորոշի հիմքի և *-օք* վերջավորության համադրությամբ (*ուղէլօք, վարզէլօք, խընդալօք* են):

Եղանակային իմաստները արտահայտության պլանում դրսևորվում են 5 կառուցատիպերով. դրանց բովանդակության պլանում համապատասխանում է եղանակային 5 իմաստ՝ սահմանական, ենթադրական, հարկադրական, ըղձական և հրամայական: Սահմանական եղանակի ներկա և անցյալ անկատար ժամանակաձևերի իմաստներն արտահայտվում են հինհայերենյան ներկայի և անցյալի կազմությունների և *ը/նը* մասնիկի հարադրությամբ բաղադրված կառույցներով, այսպես՝ *խըմիմ ը* «խմում եմ», *խըմէս ը, խըմէ նը, խըմինք ը, խըմէք ը, խըմէն նը*: Ձայնավորասկիզբ բայերի դեպքում *ավելանում է կ եղանականիշը, այսպես՝ կուղիմ ը* «ուտում եմ», *կուղէս ը, կուղէ նը, կուղինք ը, կուղիք ը, կուղին նը*: Դ. Կոստանդյանի դիտարկմամբ խոսվածքը չունի շարունակական և ընդհանրական ներկայի տարբերակում. «Երկու իմաստի համար էլ գործածվում է *ը/նը* մասնիկը»⁷: Սակայն ըստ Հ. Աճառյանի՝ Արաբկիրի բարբառում «սահմանական ներկայի կամ անկատարի մասնիկներն են *գա, գօ,*

⁷ Տե՛ս ՀԲԱ-ի նյութեր, Արաբկիր, 132:

գու, որոնք ձայնավորով սկսվող բայերի մոտ կրկնվում են, ինչպես՝ *գեթա գու, գօ գերթամ, գա գերթամ* կամ *գերթամ գա*՝ ըստ տեղի Շարունակական ներկան և անկատարը կազմվում են *ընը, նը* կամ *ը* մասնիկներով, ինչպես՝ *գերթամ ընը, գերթամ նը, գերթամ ը*»⁸ : Վերոբերյալից պարզ է դառնում, որ Արաբկիրի խոսվածքում ժամանակի ընթացքում կատարվել են ներկա և անցյալ անկատար ժամանակաձևերի ձևակազմական և իմաստագործառական փոփոխություններ: Այս երևույթը նկատել է դեռևս Գ. Ջահուկյանը. «Առանձնապես կասկածելի է Արաբկիրի խոսվածքը Հա ճյուղին հատկացնելը այն հիման վրա, որ *հա*-ն շարունակական արտահայտելուց սկսել է անցնել սովորական ներկայի արտահայտության: Այս դեպքում բացակայում է պատմական մոտեցումը. նկատի չի առնվում, որ ճյուղերի առանձնացումը պետք է կատարվի պատմական հիմքով»⁹: Մեր կարծիքով ևս հավանաբար Արաբկիրի խոսվածքին հատուկ է եղել ներկա և ապառնի ժամանակաձևերի՝ *գու* եղանականիշով կազմությունը (ենթադրական եղանակի հարացույցում այժմ էլ գործառում է *գու* մասնիկը): Սակայն ժամանակի ընթացքում, ըստ երևույթին, շարունակականի *ա* մասնիկով կազմվել են ներկայի և անցյալ անկատարի ժամանակաձևերը՝ դուրս մղելով ընդհանրական ներկայի կազմիչներին՝ միաժամանակ լուծելով ներկա և ապառնի բայաձևերի ձևաբանական տարբերական խնդիրը: Նշված փոփոխությանը կարող էր նպաստել այն հանգամանքը, որ ընդհանրական և շարունակական ժամանակաձևերը իրարից խիստ անջրպետված չեն, իմաստային մեծ տարբերություններ չունեն, և անցումը մեկից մյուսին հնարավոր է:

Սահմանական եղանակի ապառնի ժամանակի իմաստը դրսևորվում է *պիղի* եղանականիշի *տի//ղի//տ* մասնիկների և ըղձական ապառնիի և անցյալի ապառնիի կազմությունների բաղադրությամբ. բաղաձայնասկիզբ բայերի դեպքում գործածվում է *տի (ղի)* մասնիկը նախադաս կամ հետադաս կիրառությամբ, այսպես՝ *տի մընամ //մընամ ղի, տի մընամ//մընաս տի, տի մընամ//մընա ղի* ևն: Ձայնավորասկիզբ բայերին նախադաս կիրառության դեպքում համադրվում է *պիտի* եղանականիշի *տ* տարբերակը՝ (*տուղիմ, տուղիս, տուղէ, տուղինք, տուղէք, տուղին*), հետադաս կիրառության դեպքում՝ *տի (ղի) (ուղիմ ղի, ուղէս տի, ուղէ ղի, ուղէնք տի, ուղէք տի, ուղէն ղի)*: Հիշյալ կազմությունները արտահայտում են նաև հարկադրական եղանակի ժամանակաձևերի իմաստ: Ենթադրական եղանակի ժամանակաձևերը կազմվում են ըղձական եղանակի բայաձևերի և *գու* եղանականիշի

⁸ Հ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 348-349:

⁹ Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 105:

հարադրությամբ (*գ՛րրիմ գու, գ՛րրէս գու, գ՛րրէ գու, գ՛րրինք գու, գ՛րրէք գու, գ՛րրէն գու*): Հրամայական եղանակի եզակի թվի իմաստը արտահայտվում է -է, -ա, -իր վերջավորություններով բաղադրված կազմություններով: -է վերջավորություն են ստանում է խոնարհման պարզ բայերը (*գ՛րրէ՛, փօխէ՛, քըմմէ՛, ծամէ՛* են), -ա վերջավորություն՝ ա խոնարհման պարզ բայերը (*խընդա՛, կարթա՛, հավդա՛* են): Եւ ա խոնարհման ածանցավոր բայերի հրամայականի ձևերը կազմվում են -իր դիմաթվանիշ թեքույթով (*էչի՛ր, անցի՛ր, հաքի՛ր* են): Ա խոնարհման ածանցավոր բայերը -իր վերջավորությունը հավելում են անցյալի ցոյական հիմքին (*վէծծի՛ր, մօղիզցի՛ր, մօռցի՛ր* են), իսկ է խոնարհման բայերը՝ ներկայի հիմքին (*հասի՛ր, մըղի՛ր* են): Հրամայականի հոգնակի թվի ձևերը բաղադրվում են -էք վերջավորությամբ, որը համադրվում է անցյալի ցոյական հիմքին (*պաղմէցէ՛ք, պարսըցէ՛ք, բացըրցէ՛ք, վըլացէ՛ք* են):

Ժխտական խոնարհման կառույցները հատկանշվում են նախամասնիկավորմամբ: Խոսվածքում գործառող ժխտական նախամասնիկներն են չ /չի/ն և մի-ն: Եղանականիշ նախամասնիկ չունեցող ժամանակաձևերի (դերբայակազմ ժամանակաձևեր, անցյալ կատարյալ, ըղձական (անցյալ-ապառնի) ժխտական կազմությունները ձևավորվում են չի//չ ժխտական մասնիկներով, որը բաղադրվում է հաստատական խոնարհման ձևերին (*չի գ՛րրէցի, չի գ՛րրէցիր, չի գ՛րրէց, չի գ՛րրէցինք, չի գ՛րրէցիք, չի գըրրէցին*): Մահմանական ներկայի և անցյալ անկատարի կազմությունների ժխտական ձևերը կազմվում են -էր, -ար վերջամասնիկներով ժխտական դերբայի և օժանդակ բայի զուգորդությամբ՝ պահպանելով *ը/նը* մասնիկը (*չէմ լըսէր ք, չէս լըսէր ք, չե՛չի լըսէր ք, չէնք լըսէր ք, չէք լըսէր ք, չէն լըսէր ք*): *Գու* (գ) եղանականիշ մասնիկ ունեցող կազմությունների ժխտական ձևերը նույնպես կազմվում են ժխտական դերբայի և օժանդակ բայի ժխտական ձևերի հարադրությամբ, այսպես՝ *չէմ գ՛րրէր, չէս գ՛րրէր, չէ գ՛րրէր, չէնք գ՛րրէր, չէք գ՛րրէր, չէն գ՛րրէր*: *Տի* (դի, տ) մասնիկներով բաղադրված կազմությունների ժխտական խոնարհման ձևերում չ (*չի*) մասնիկը նախորդում է եղանականիշին, այսպես՝ *չի դի խըմիմ «չպիտի խմես», չի դի խըմէս, չի դի խըմէ, չի դի խըմինք, չի դի խըմէք, չի դի խըմէն*: Արգելական հրամայականի իմաստը արտահայտվում է *մի* (*մը*) արգելական մասնիկի նախադաս կիրառությամբ (*մի՛ խաղար, մի՛ էրթար, մի՛ գարթար, մի՛ խօսիր* են):

Հատկացուցիչի և հատկացյալի համաձայնությունը արտահայտվում է համանիշ կառույցների գործածությամբ՝ որոշյալ հատկացյալի հետ որոշյալ հատկացուցիչ (*ծառին փուրը «տերև», հ՛արդին խօղը, Մարքիսին դըղան*) և անորոշ հատկացյալի հետ անորոշ հատկացուցիչ (*ծառի փուր, հ՛արդի խօղ*,

Մարքիսի դրդա): Ենթակայի և ուղիղ խնդրի շարադասությունը ազատ է: Ուղիղ խնդիրը գործածվում է ստորոգյալին նախադաս դիրքով (*Կադուն մուգ բ՛ըռնեց, Տային խօղ քաղե՛ նը*): Անորոշ դերբայով արտահայտված նպատակի պարագան, ուղղականաձև է (*Տանձ քաղել գացի* «Գնացի՝ տանձ քաղելու», *Հ՛արդ ջ՛ըրել գ՛ընաց* «Գնաց՝ արտը ջրելու»): Տեղի պարագայի իմաստը դրսևորվում է վերլուծական (*մէչ կապ+սեռական հոլովաձև՝ Ամանին մէչը ջ՛ուր կա* «Ամանի մեջ ջուր կա», *Տաշօնին մէչը հաց չի գա* «Տաշտում հաց չկա») և համադրական (հայցական հոլովաձև՝ *Էքին կաշխաղի նը* «Այգում աշխատում են», *Գ՛էղը կաբրի նը* «Գյուղում կապրի») կառույցներով:

Այսպիսով, Արաբկիր քաղաքի խոսվածքը հատկանշվում է լեզվական ինքնատիպ հատկանիշներով: Աշխատանքը կարևորվում է արևմտահայ խմբակցության՝ կորստյան վտանգի առջև կանգնած բարբառային միավորի՝ Արաբկիր քաղաքի խոսվածքի նորահայտ տվյալները գիտական շրջանառության մեջ դնելու և բարբառային նյութը անդառնալի կորստից փրկելու փաստով:

GAYANE GEVORGYAN- GENERAL DISCRPTION OF THE LANGUAGE FEATURES OF ARABKIR CITY - The speech of Arabkir city is characterized by the abundance of pairs phonetical grammar characther and vocabulary couples, and are presented as a unique manifestation of Armenian dialectic. The article is important for the preservation of the preserved state of the dialectic units facing the loss of the Western Armenian territory and the fact that the dialectic material is saved from irreversible loss. In this article is presented the general description of the dialectic features of Arabkir's speech, which is done according to the Armenian Dialectal Atlas's program "Arabkir".